ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 16

Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջեր

Հղումներ

- «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9
- «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8
- «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ՀՀՄՍ 21

Նախապատմություն

1. Շատ հաշվետու կազմակերպություններ ներդրումներ ունեն արտերկրյա ստորաբաժանումներում (ինչպես սահմանված է ՀՀՄՍ 21-ի 8-րդ պարագրաֆում): Նման արտերկրյա ստորաբաժանումները կարող են լինել դուստր կազմակերպություններ, ասոցիացված կազմակերպություններ, համատեղ ձեռնարկումներ կամ մասնաճյուղեր: ՀՀՄՍ 21-ի պահանջների համաձայն՝ կազմակերպությունը պետք է իր յուրաքանչյուր արտերկրյա ստորաբաժանման համար որոշի ֆունկցիոնալ արժույթը՝ որպես այդ ստորաբաժանման հիմնական տնտեսական միջավայրի արժույթ: Արտերկրյա ստորաբաժանման արդյունքներն ու ֆինանսական վիճակը ներկայացման արժույթով վերահաշվարկելիս կազմակերպությունը պետք է արտարժույթի փոխարժեքային տարբերությունները ճանաչի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև այդ արտերկրյա ստորաբաժանման օտարումը:

2. Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումից առաջացած արտարժութային ռիսկի հեջի հաշվապահական հաշվառումը կիրառվում է միայն այն դեպքում, երբ այդ արտերկրյա ստորաբաժանման զուտ ակտիվները ներառված են ֆինանսական հաշվետվություններում1: Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման արդյունքում առաջացած արտարժութային ռիսկի հետ կապված հեջավորվող հոդվածը կարող է լինել զուտ ակտիվների գումարը, որը փոքր է կամ հավասար արտերկրյա ստորաբաժանման զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքին:

3. ՖՀՄՍ 9-ի պահանջների համաձայն՝ հեջի հաշվապահական հաշվառման փոխհարաբերություններում պետք է նախորոշվեն որպես թույլատրված հեջավորված հոդված և թույլատրված հեջավորման գործիքներ: Եթե զուտ ներդրման հեջի դեպքում առկա են նախորոշված հեջավորման փոխհարաբերություններ, ապա շահույթը կամ վնասը, որը կառաջանա հեջավորման գործիքից, որը որոշված է, որ կլինի զուտ ներդրման արդյունավետ հեջ, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ներառվում է արտերկրյա ստորաբաժանման արդյունքների և ֆինանսական վիճակի վերահաշվարկման հետևանքով առաջացած արտարժույթի փոխարժեքային տարբերությունների մեջ:

4. Շատ արտերկրյա ստորաբաժանումներ ունեցող կազմակերպությունը կարող է ենթարկվել մի շարք արտարժութային ռիսկերի: Սույն մեկնաբանությունն օգնում է որոշակիացնել այն արտարժութային ռիսկերը, որոնք որակվում են որպես արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջի մաս կազմող հեջավորված ռիսկ:

5. ՖՀՄՍ 9-ը թույլ է տալիս կազմակերպությանը նախորոշել կա՛մ ածանցյալ, կա՛մ ոչ ածանցյալ ֆինանսական գործիք (կամ ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների համակցությունը) որպես արտարժութային ռիսկի համար նախորոշված հեջավորման գործիքներ: Սույն մեկնաբանությունը հանդիսանում է ուղեցույց, թե խմբի մեջ որտեղ կարող են պահվել արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջեր հանդիսացող հեջավորման գործիքները՝ համապատասխանելու համար հեջի հաշվապահական հաշվառման դրույթներին:

---

1 Սա կլինի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, այն ֆինանսական հաշվետվություններում, որտեղ ներդրումները, ինչպիսիք են ասոցիացված կազմակերպությունները կամ համատեղ ձեռնարկումները, հաշվառված են բաժնեմասնակցության մեթոդով կամ այն ֆինանսական հաշվետվություններում, որոնք ներառում են մասնաճյուղ կամ համատեղ գործունեություն՝ սահմանված «*Համատեղ պայմանավորվածություններ*» ՖՀՄՍ 11-ին համապատասխան

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

6. ՀՀՄՍ 21-ը և ՖՀՄՍ 9-ը պահանջում են, որ արտերկրյա ստորաբաժանման արդյունքների ու ֆինանսական վիճակի վերահաշվարկման հետևանքով առաջացած արտարժույթի փոխարժեքային տարբերությունները և զուտ ներդրման արդյունավետ հեջ հանդիսացող հեջավորման գործիքի գծով շահույթի կամ վնասի կուտակային գումարները, որոնք ճանաչված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, սեփական կապիտալից վերադասակարգվեն որպես շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտում, այն պահին, երբ մայր կազմակերպությունն օտարում է այդ արտերկրյա ստորաբաժանումը: Սույն մեկնաբանությունը հանդիսանում է ուղեցույց, թե ինչպես պետք է կազմակերպությունը որոշի այն գումարները, որոնք սեփական կապիտալից պետք է վերադասակարգվեն որպես շահույթ կամ վնաս և՛ հեջավորման գործիքի, և՛ հեջավորված հոդվածի համար:

Գործողության ոլորտը

7. Սույն մեկնաբանությունը կիրառվում է այն կազմակերպության կողմից, որը հեջավորում է արտերկրյա ստորաբաժանումում իր զուտ ներդրումներից առաջացող արտարժութային ռիսկը և ցանկանում է այդ հեջը որակել որպես հեջի հաշվապահական հաշվառման ենթակա՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի: Նպատակահարմարության համար սույն մեկնաբանությունում նման կազմակերպությունը նշվում է որպես մայր կազմակերպություն, իսկ ֆինանսական հաշվետվությունները, որոնցում ներառված են արտերկրյա ստորաբաժանման զուտ ակտիվները՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Մայր կազմակերպությանը հասցեագրված բոլոր հղումները հավասարապես կիրառվում են նաև այն կազմակերպության նկատմամբ, որն ունի զուտ ներդրում արտերկրյա ստորաբաժանումում՝ որը կարող է լինել համատեղ ձեռնարկում, ասոցիացված կազմակերպություն կամ մասնաճյուղ:

8. Սույն Մեկնաբանությունը կիրառվում է միայն արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումների հեջերի նկատմամբ. այն չպետք է համանմանորեն անալոգիայով կիրառվի այլ տեսակի հեջերի հաշվապահական հաշվառման նկատմամբ:

Խնդիրներ

9. Արտերկրյա ստորաբաժանումներում ներդրումները կարող են պահվել ուղղակիորեն մայր կազմակերպության կողմից, կամ անուղղակիորեն իր դուստր կազմակերպության կամ դուստր կազմակերպությունների կողմից: Սույն մեկնաբանությամբ դիտարկված հարցադրումները հետևյալն են՝

   ա) հեջավորված ռիսկի էությունը և հեջավորված հոդվածի գումարը, որի համար կարող է նախորոշվել հեջավորման փոխհարաբերություն՝

      (i) արդյոք մայր կազմակերպությունը կարող է որպես հեջավորված ռիսկ նախորոշել միայն այն արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են մայր կազմակերպության և իր արտերկրյա ստորաբաժանման ֆունկցիոնալ արժույթների միջև, կամ արդյոք այն կարող է նաև որպես հեջավորված ռիսկ նախատեսել այն արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթի և արտերկրյա ստորաբաժանման ֆունկցիոնալ արժույթի միջև.

      (ii) եթե մայր կազմակերպությունը արտերկրյա ստորաբաժանումը պահում է անուղղակիորեն, արդյոք հեջավորված ռիսկը կարող է ներառել միայն արտարժույթի փոխարժեքային այն տարբերությունները, որոնք առաջանում են արտերկրյա ստորաբաժանման և դրա անմիջական մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթների միջև, կամ արդյոք հեջավորված ռիսկը կարող է նաև ներառել արտարժույթի փոխարժեքային որևէ տարբերություններ, որոնք առաջանում են արտերկրյա ստորաբաժանման և որևէ միջանկյալ կամ վերջնական մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթների միջև (այսինքն՝ արդյոք այն փաստը, որ միջանկյալ մայր կազմակերպությունն է տիրապետում արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումը, ազդում է վերջնական մայր կազմակերպության տնտեսական ռիսկի վրա).

   բ) խմբի մեջ որտեղ կարող է պահվել հեջավորման գործիքը՝

      (i) արդյոք հեջի հաշվապահական հաշվառման համար որակվող փոխհարաբերություն կարող են սահմանվել միայն այն դեպքում, եթե իր զուտ ներդրումները հեջավորող կազմակերպությունը հեջավորող գործիքի կողմ է, կամ արդյոք այդ խմբի ցանկացած կազմակերպություն կարող է պահել հեջավորող գործիքը՝ անկախ իր ֆունկցիոնալ արժույթից.

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

(ii) արդյոք հեջավորող գործիքի բնույթը (ածանցյալ կամ ոչ ածանցյալ) կամ համախմբման մեթոդը ազդում են հեջի արդյունավետության գնահատման վրա.

գ) ինչ գումարներ պետք է սեփական կապիտալից վերադասակարգվեն որպես շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտումներ, արտերկրյա ստորաբաժանման օտարումից հետո՝

(i) երբ հեջավորված արտերկրյա ստորաբաժանումն օտարվի, հեջավորող գործիքի և այդ արտերկրյա ստորաբաժանման հետ կապված մայր կազմակերպության արտարժույթի վերահաշվարկման պահուստից ինչ գումարներ պետք է սեփական կապիտալից վերադասակարգվեն որպես շահույթ կամ վնաս մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում.

(ii) արդյոք համախմբման մեթոդը ազդում է սեփական կապիտալից որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող գումարների որոշման վրա:

Փոխհամաձայնություն

Հեջավորված ռիսկի էությունը և հեջավորված հոդվածի գումարը, որի համար կարող է նախորոշվել հեջավորման փոխհարաբերություն

10. Հեջի հաշվապահական հաշվառումը կարող է կիրառվել միայն այն արտարժույթի փոխարժեքային տարբերությունների նկատմամբ, որոնք առաջանում են արտերկրյա ստորաբաժանման և մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթների միջև:

11. Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումից առաջացող արտարժութային ռիսկերի հեջի ժամանակ հեջավորված հոդվածը կարող է լինել զուտ ակտիվների գումարը, որը փոքր է կամ հավասար մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված արտերկրյա ստորաբաժանման զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքին: Արտերկրյա ստորաբաժանման զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը, որը կարող է մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում նախորոշվել որպես հեջավորված հոդված, կախված է այն հանգամանքից, թե արդյոք այդ արտերկրյա ստորաբաժանման որևէ ցածր աստիճանի մայր կազմակերպություն կիրառել է հեջի հաշվապահական հաշվառումը այդ արտերկրյա ստորաբաժանման բոլոր զուտ ակտիվների կամ դրանց մի մասի նկատմամբ, և որ այդ հաշվապահական հաշվառումը ներառվել է մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

12. Հեջավորված ռիսկը կարող է նախորոշվել որպես ենթարկվածություն արտարժույթի փոխարժեքին, որն առաջանում է արտերկրյա ստորաբաժանման և իր որևէ մայր կազմակերպության (անմիջական, միջանկյալ կամ վերջնական մայր կազմակերպության) ֆունկցիոնալ արժույթների միջև: Այն փաստը, որ միջանկյալ մայր կազմակերպությունն է տիրապետում զուտ ներդրումը, չի ազդում այն տնտեսական ռիսկի էության վրա, որն առաջանում է վերջնական մայր կազմակերպության արտարժութային ենթարկվածությունից:

13. Արտարժույթի ռիսկին ենթարկվածությունը, որն առաջանում է արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումներից, կարող է համախմբված ֆինանսական հաշվետվություններում հեջի հաշվապահական հաշվառման ենթակա որակվել միայն մեկ անգամ: Ուստի, եթե արտերկրյա ստորաբաժանման միևնույն զուտ ակտիվները միևնույն ռիսկի համար հեջավորված են խմբի մեկից ավելի մայր կազմակերպությունների կողմից (օրինակ՝ և՛ անմիջական, և՛ ոչ անմիջական մայր կազմակերպության), ապա միայն մեկ հեջավորող փոխհարաբերություն է որակվում հեջի հաշվապահական հաշվառման ենթակա վերջնական մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Մեկ մայր կազմակերպության կողմից իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում նախորոշված հեջավորման փոխհարաբերությունը չպետք է պահպանվի մեկ այլ՝ ավելի բարձր աստիճանի մայր կազմակերպության կողմից: Այնուամենայնիվ, եթե այն պահպանված չէ բարձր աստիճանի մայր կազմակերպության կողմից, ապա ցածր աստիճանի մայր կազմակերպության կիրառած հեջի հաշվապահական հաշվառումը պետք է հակադարձվի նախքան բարձր աստիճանի մայր կազմակերպության հեջի հաշվապահական հաշվառման ճանաչումը:

Որտեղ կարող է պահվել հեջավորման գործիքը

14. Ածանցյալ կամ ոչ ածանցյալ գործիքը (կամ ածանցյալ և ոչ ածանցյալ գործիքների համակցությունը) կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջում: Հեջավորող

գործիքը (գործիքները) կարող է պահվել միևնույն խմբի ցանկացած կազմակերպության կամ կազմակերպությունների կողմից, քանի դեռ բավարարված են ՖՀՄՍ 9-ի 6.4.1-րդ պարագրաֆի այն պահանջները, որոնք վերաբերում են զուտ ներդրման հեջի նախատեսմանը, փաստաթղթավորմանը և արդյունավետությանը: Մասնավորապես, խմբի տարբեր աստիճաններում հնարավոր տարբեր հեջավորման նախատեսումների պատճառով խմբի հեջավորման ռազմավարությունը պետք է հստակորեն փաստաթղթավորվի:

15. Արդյունավետությունը գնահատելու նպատակով՝ արտարժութային ռիսկի հետ կապված հեջավորող գործիքի արժեքի փոփոխությունը հաշվարկվում է մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի հիման վրա, որի ֆունկցիոնալ արժույթի նկատմամբ էլ չափվում է ռիսկը՝ հեջի հաշվապահական հաշվառման փաստաթղթավորման համաձայն: Կախված այն հանգամանքից, թե որտեղ է պահված հեջավորման գործիքը՝ հեջի հաշվապահական հաշվառման բացակայության դեպքում արժեքի ընդհանուր փոփոխությունը կարող է ճանաչվել շահույթում կամ վնասում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, կամ էլ երկուսում: Այնուամենայնիվ, արդյունավետության գնահատման վրա չի ազդում այն, թե արդյոք հեջավորող գործիքի արժեքի փոփոխությունը ճանաչված է շահույթում կամ վնասում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Որպես հեջի հաշվապահական հաշվառման կիրառման մաս՝ փոփոխության ընդհանուր արդյունավետ մասը ներառվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Արդյունավետության գնահատման վրա չի ներգործում ոչ համախմբման մեթոդը, ոչ էլ այն, թե արդյոք հեջավորող գործիքը ածանցյալ է, թե ոչ:

Հեջավորված արտերկրյա ստորաբաժանման օտարումը

16. Երբ հեջավորված արտերկրյա ստորաբաժանումն օտարվում է, այն գումարը, որը հեջավորման գործիքի առումով մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտարժույթի վերահաշվարկման պահուստից պետք է վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտում, այն գումարն է , որը պետք է որոշվի ըստ ՖՀՄՍ 9-ի 6.5.14-րդ պարագրաֆի: Այդ գումարը հեջավորման գործիքի գծով կուտակային շահույթը կամ վնասն է, որը որոշված է որպես արդյունավետ հեջ:

17. Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրմանը վերաբերող մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտարժույթի վերահաշվարկման պահուստից որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող գումարը՝ ՀՀՄՍ 21-ի 48-րդ պարագրաֆի համաձայն, այն գումարն է, որը ներառված է այդ մայր կազմակերպության արտարժույթի վերահաշվարկման պահուստում տվյալ արտերկրյա ստորաբաժանման գծով: Վերջնական մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում բոլոր արտերկրյա ստորաբաժանումների գծով արտարժույթի վերահաշվարկման պահուստում ճանաչված ընդհանուր զուտ գումարի վրա չի ազդում համախմբման մեթոդը: Սակայն այն փաստը, թե արդյոք վերջնական մայր կազմակերպությունը կիրառում է համախմբման ուղղակի, թե քայլ առ քայլ մեթոդը, կարող է ազդել այդ առանձին արտերկրյա ստորաբաժանմանը վերագրվող արտարժույթի վերահաշվարկման պահուստում ներառված գումարի վրա2: Համախմբման քայլ առ քայլ մեթոդը կարող է հանգեցնել այն բանին, որ որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվի մի գումար, որը տարբեր է հեջի արդյունավետությունը որոշելու համար օգտագործված գումարից: Այս տարբերությունից կարելի է խուսափել՝ որոշելով այդ արտերկրյա ստորաբաժանմանը վերաբերող գումարը այն չափով, որը կգոյանար, եթե կիրառված լիներ համախմբման ուղղակի մեթոդը: ՀՀՄՍ 21-ը չի պահանջում, որ կատարվի այս ճշգրտումը: Այնուամենայնիվ, սա հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն է, որը պետք է հետևողականորեն կիրառվի բոլոր զուտ ներդրումների նկատմամբ:

Ուժի մեջ մտնելը

18. Սույն մեկնաբանությունը կազմակերպությունը պետք է կիրառի 2008 թվականի հոկտեմբերի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Կազմակերպությունը պետք է կիրառի 14-րդ պարագրաֆի փոփոխությունը, որը կատարվել է 2009 թվականի ապրիլին հրապարակված «Բարելավումներ ՖՀՄՍ-ներում» փաստաթղթում, 2009 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Երկու դեպքում էլ ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը սույն Մեկնաբանությունը

---

2 Ուղղակի մեթոդը համախմբման մեթոդ է, ըստ որի՝ արտերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունները վերահաշվարկվում են անմիջապես վերջնական մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով: Քայլ առ քայլ մեթոդը համախմբման մեթոդ է, ըստ որի՝ արտերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունները սկզբում վերահաշվարկվում են որևէ միջանկյալ մայր կազմակերպության (կազմակերպությունների) ֆունկցիոնալ արժույթով, իսկ հետո վերահաշվարկվում վերջնական մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով (կամ ներկայացման արժույթով, եթե տարբեր է)

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կիրառում է 2008 թվականի հոկտեմբերի 1-ից շուտ սկսվող ժամանակաշրջանի նկատմամբ կամ կիրառում է 14-րդ պարագրաֆի փոփոխությունը մինչև 2009 թվականի հուլիսի 1-ը, ապա պետք է բացահայտի այդ փաստը:

18Ա. [Հանված է]

18Բ. 2014 թվականի հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9-ով փոփոխվել են 3, 5-7, 14, 16, ԿՈՒ1 և ԿՈՒ8 պարագրաֆները և հանվել է պարագրաֆ 18Ա-ն: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՍ 9-ը:

Անցումը

19. ՀՀՄՍ 8-ը հատկանշում է, թե ինչպես պետք է կազմակերպությունը կիրառի մեկնաբանության սկզբնական կիրառման արդյունքում առաջացած հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը: Կազմակերպությունը պարտավոր չէ կատարել այդ պահանջները սույն մեկնաբանությունն առաջին անգամ կիրառելիս: Եթե կազմակերպությունը հեջավորման գործիքը նախատեսել էր որպես զուտ ներդրման հեջ, բայց այդ հեջը չի բավարարում սույն մեկնաբանության հեջի հաշվապահական հաշվառման պայմաններին, ապա կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 39-ը, որպեսզի առաջընթաց կերպով դադարեցնի հեջի հաշվապահական հաշվառումը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Հավելված

Կիրառման ուղեցույց

Սույն հավելվածը սույն մեկնաբանության անբաժանելի մասն է:

ԿՈՒ1. Սույն հավելվածը լուսաբանում է մեկնաբանության կիրառումը՝ օգտագործելով ստորև ներկայացված կորպորատիվ կառուցվածքը: Նկարագրված հեջավորող փոխհարաբերությունների բոլոր դեպքերում արդյունավետությունը պետք է ստուգվի համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ չնայած սույն հավելվածում այդ ստուգումը չի քննարկվում: Մայր կազմակերպությունը՝ հանդիսանալով խմբի վերջնական մայր կազմակերպություն, իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում է իր ֆունկցիոնալ արժույթով՝ եվրոյով (EUR): Դուստր կազմակերպություններից յուրաքանչյուրը նրան պատկանում է ամբողջությամբ: Մայր կազմակերպության £500 միլիոն զուտ ներդրումը Բ դուստր կազմակերպությունում (ֆունկցիոնալ արժույթն է ֆունտ ստեռլինգը (GBP)) ներառում է Գ դուստր կազմակերպությունում (ֆունկցիոնալ արժույթն է ԱՄՆ դոլար (USD)) Բ դուստր կազմակերպության կատարած $300 միլիոն զուտ ներդրման £159 միլիոնի համարժեքը: Այլ կերպ ասած՝ Բ դուստր կազմակերպության զուտ ակտիվները, բացի Գ դուստր կազմակերպությունում իր ներդրումից, £341 միլիոն է:

Հեջավորված ռիսկի էությունը, որի համար կարող է նախորոշվել հեջավորման փոխհարաբերություն (պարագրաֆներ 10-13)

ԿՈՒ2. Մայր կազմակերպությունը կարող է հեջավորել Ա, Բ և Գ դուստր կազմակերպություններից յուրաքանչյուրում իր ունեցած զուտ ներդրումը իրենց համապատասխան ֆունկցիոնալ արժույթների (ճապոնական իեն (JPY), ֆունտ ստեռլինգ և ԱՄՆ դոլար) և եվրոյի միջև արտարժույթի փոխարժեքային ռիսկերի գծով: Բացի այդ, մայր կազմակերպությունը կարող է հեջավորել Բ և Գ դուստր կազմակերպությունների ֆունկցիոնալ արժույթների միջև եղած USD/GBP արտարժույթի փոխարժեքային ռիսկը: Իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում Բ դուստր կազմակերպությունը կարող է հեջավորել Գ դուստր կազմակերպությունում իր զուտ ներդրումը ԱՄՆ դոլարով և ֆունտ ստեռլինգով արտահայտված իրենց ֆունկցիոնալ արժույթների միջև արտարժույթի փոխարժեքային ռիսկի գծով: Հետևյալ օրինակներում նախորոշված ռիսկը արտարժույթի սփոթ փոխարժեքային ռիսկն է, քանի որ հեջավորող գործիքներն ածանցյալ չեն: Եթե հեջավորող գործիքները լինեին ֆորվարդային պայմանագրեր, ապա մայր կազմակերպությունը կնախատեսեր արտարժույթի ֆորվարդ փոխարժեքային ռիսկը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ



Հեջավորված հոդվածի գումարը, որի համար կարող է նախորոշվել հեջավորման փոխհարաբերություն (պարագրաֆներ 10-13)

ԿՈՒ3. Մայր կազմակերպությունը ցանկանում է հեջավորել Գ դուստր կազմակերպությունում իր զուտ ներդրման արտարժույթի փոխարժեքային ռիսկը: Ենթադրենք, որ Ա դուստր կազմակերպությունն ունի $300 միլիոնի արտաքին ստացված փոխառություն: Հաշվետու ժամանակաշրջանի սկզբին Ա դուստր կազմակերպության զուտ ակտիվները կազմում են (¥400,000 միլիոն, ներառյալ $300 միլիոն կազմող արտաքին փոխառությունից ստացված մուտքերը:

ԿՈՒ4. Հեջավորված հոդվածը կարող է լինել զուտ ակտիվների գումարը, որը փոքր է կամ հավասար Գ դուստր կազմակերպությունում ($300 միլիոն) մայր կազմակերպության զուտ ներդրման հաշվեկշռային արժեքին, որը ներկայացված է իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում մայր կազմակերպությունը կարող է նախատեսել Ա դուստր կազմակերպության $300 միլիոն կազմող արտաքին փոխառությունը որպես EUR/USD-ի արտարժույթի սփոթ փոխարժեքային ռիսկի հեջավորում, որը կապված է Գ դուստր կազմակերպության զուտ ակտիվներում $300 միլիոն զուտ ակտիվներում իր զուտ ներդրման հետ: Այս դեպքում՝ հեջի հաշվապահական հաշվառման դրույթների համաձայն, EUR/USD արտարժույթի փոխարժեքային տարբերությունները և՛ Ա դուստր կազմակերպության $300 միլիոն կազմող արտաքին փոխառության մասով, և՛ Գ դուստր կազմակերպությունում $300 միլիոն զուտ ներդրման մասով ներառվում են մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունների արտարժույթի վերահաշվարկման պահուստում:

ԿՈՒ5. Հեջի հաշվապահական հաշվառման բացակայության դեպքում Ա դուստր կազմակերպության $300 միլիոն կազմող արտաքին փոխառության առումով USD/EUR արտարժույթի փոխարժեքի ընդհանուր տարբերությունը պետք է ճանաչվի մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում հետևյալ կերպ՝

- շահույթի կամ վնասի մեջ USD/JPY արտարժույթի սփոթ փոխանակման փոխարժեքի փոփոխությունը՝ վերահաշվարկված եվրոյով, և
- JPY/EUR ընթացիկ արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ԿՈՒ4 պարագրաֆում ներկայացված նախատեսման փոխարեն՝ իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում մայր կազմակերպությունը Ա դուստր կազմակերպության $300 միլիոն կազմող արտաքին փոխառությունը կարող է նախատեսել Բ և Գ դուստր կազմակերպությունների միջև GBP/USD արտարժույթի սփոթ փոխարժեքային ռիսկի հեջավորման համար: Այս դեպքում Ա դուստր կազմակերպության $300 միլիոն կազմող արտաքին փոխառության գծով USD/EUR արտարժույթի փոխարժեքային ընդհանուր տարբերությունը կճանաչվի մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում հետևյալ կերպ՝

- GBP/USD արտարժույթի սփոթ փոխանակման փոխարժեքային փոփոխությունը Գ դուստր կազմակերպությանը վերաբերող արտարժույթի վերահաշվարկման պահուստում,
- GBP/JPY փոխանակման սփոթ փոխարժեքային փոփոխությունը՝ վերահաշվարկված եվրոյով շահույթում կամ վնասում, և
- JPY/EUR փոխանակման սփոթ փոխարժեքային փոփոխությունն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

ԿՈՒ6. Իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում մայր կազմակերպությունը չի կարող Ա դուստր կազմակերպության $300 միլիոն կազմող արտաքին փոխառությունը միաժամանակ նախատեսել որպես և՛ EUR/USD, և՛ GBP/USD արտարժույթի սփոթ փոխարժեքային ռիսկերի հեջավորման համար: Մեկ հեջավորման գործիք կարող է հեջավորել միևնույն նախորոշված ռիսկը միայն մեկ անգամ: Բ դուստր կազմակերպությունը չի կարող կիրառել հեջի հաշվապահական հաշվառումն իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում, որովհետև հեջավորող գործիքը գտնվում է Բ և Գ դուստր կազմակերպություններից բաղկացած խմբից դուրս:

Խմբի մեջ որտեղ կարող է պահվել հեջավորման գործիքը (պարագրաֆ 14 և 15)

ԿՈՒ7. Ինչպես նշվել է ԿՈՒ5 պարագրաֆում, հեջի հաշվապահական հաշվառման բացակայության դեպքում Ա դուստր կազմակերպության $300 միլիոն կազմող արտաքին փոխառության արժեքի ընդհանուր փոփոխությունը արտարժույթի փոխարժեքային ռիսկի գծով կգրանցվեր և՛ որպես շահույթ կամ վնաս (USD/JPY սփոթ ռիսկի գծով), և՛ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (EUR/JPY սփոթ ռիսկի գծով) մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Երկու գումարներն էլ ներառվում են՝ ԿՈՒ4 պարագրաֆում նախորոշված հեջի արդյունավետությունը գնահատելու համար, քանի որ հեջի փաստաթղթավորման համաձայն՝ և՛ հեջավորման գործիքի, և՛ հեջավորված հոդվածի արժեքի փոփոխությունները հաշվարկվում են ոչ թե Գ դուստր կազմակերպության ԱՄՆ դոլար ֆունկցիոնալ արժույթի, այլ մայր կազմակերպության եվրո ֆունկցիոնալ արժույթի հիման վրա: Համախմբման մեթոդը (այսինքն՝ ուղղակի կամ քայլ առ քայլ) չի ազդում հեջի արդյունավետության գնահատման վրա:

Որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող գումարները արտերկրյա ստորաբաժանման օտարումից հետո (պարագրաֆներ 16 և 17)

ԿՈՒ8. Երբ Գ դուստր կազմակերպությունն օտարվի, մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում իր արտարժույթի վերահաշվարկման պահուստից (ԱՎՊ) որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող գումարները հետևյալն են՝

ա) Ա դուստր կազմակերպության $300 միլիոն կազմող արտաքին փոխառության առումով, ըստ ՖՀՄՍ 9-ի պահանջի որոշակիացվող գումարը, այսինքն՝ արտարժույթի փոխարժեքային ռիսկի գծով արժեքի այն ընդհանուր փոփոխությունները, որը ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում որպես հեջի արդյունավետ մաս, և

բ) Գ դուստր կազմակերպությունում $300 միլիոն զուտ ներդրման առումով, կազմակերպության համախմբման մեթոդով որոշված գումարը: Եթե մայր կազմակերպությունը գործածի ուղղակի մեթոդը, ապա Գ դուստր կազմակերպության առումով ԱՎՊ-ն կորոշվի ուղղակի EUR/USD արտարժույթի փոխանակման փոխարժեքով: Եթե մայր կազմակերպությունը գործածի քայլ առ քայլ մեթոդը, ապա Գ դուստր կազմակերպության առումով իր ԱՎՊ-ն կորոշվի Բ դուստր կազմակերպության կողմից ճանաչված ԱՎՊ-ով, որն արտացոլում է GBP/USD արտարժույթի փոխանակման փոխարժեքը՝ վերահաշվարկված մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով՝ օգտագործելով EUR/GBP արտարժույթի

փոխանակման փոխարժեքը: Նախորդ ժամանակաշրջաններում մայր կազմակերպության կողմից համախմբման քայլ առ քայլ մեթոդի օգտագործումը չի պահանջում կամ արգելում, որպեսզի Գ դուստր կազմակերպության օտարումից մայր կազմակերպությունը, որպես ԱՎՊ-ից վերադասակարգման ենթակա գումար, որոշի այն գումարը, որն ինքը կճանաչեր, եթե միշտ օգտագործեր ուղղակի մեթոդը՝ կախված իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունից:

Մեկից ավելի արտերկրյա ստորաբաժանումների հեջավորումը (պարագրաֆներ 11, 13 և 15)

ԿՈՒ9. Հետևյալ օրինակները լուսաբանում են, որ մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում այն ռիսկը, որը կարող է հեջավորվել, միշտ հանդիսանում է իր ֆունկցիոնալ արժույթի (եվրո) և Բ ու Գ դուստր կազմակերպությունների ֆունկցիոնալ արժույթների միջև եղած ռիսկը: Անկախ այն հանգամանքից, թե հեջերն ինչպես են նախորոշված՝ այն առավելագույն գումարները, որոնք կարող են լինել արդյունավետ հեջեր՝ մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունների արտարժույթի վերահաշվարկման պահուստներում ներառվելու համար, երբ երկու արտերկրյա ստորաբաժանումներն էլ հեջավորված են, հանդիսանում են $300 միլիոնը EUR/USD ռիսկի գծով և £341 միլիոնը EUR/GBP ռիսկի գծով: Արտարժույթի փոխարժեքային փոփոխություններից առաջացած արժեքի այլ փոփոխությունները ներառվում են մայր կազմակերպության համախմբված շահույթների կամ վնասների մեջ: Անշուշտ, հնարավոր է, որ մայր կազմակերպությունը $300 միլիոնը նախատեսեր միայն USD/GBP արտարժույթի սփոթ փոխանակման փոխարժեքի համար կամ £500 միլիոնը՝ միայն GBP/EUR արտարժույթի սփոթ փոխանակման փոխարժեքի համար:

Մայր կազմակերպությունը տիրապետում է և՛ USD-ով, և՛ GBP-ով արտահայտված հեջավորման գործիքներ

ԿՈՒ10. Մայր կազմակերպությունը կարող է ցանկանալ հեջավորել Բ և Գ դուստր կազմակերպություններում իր զուտ ներդրումների հետ կապված արտարժույթի փոխարժեքային ռիսկերը: Ենթադրենք, որ մայր կազմակերպությունը տիրապետում է ԱՄՆ դոլարով և ֆունտ ստեռլինգով արտահայտված համապատասխան հեջավորման գործիքներ, որոնք կարող է նախատեսել որպես Բ և Գ դուստր կազմակերպություններում իր զուտ ներդրումների հեջեր: Այն նախատեսումները, որ կարող է անել մայր կազմակերպությունն իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում, ներառում են հետևյալը, բայց չեն սահմանափակվում դրանցով՝

ա) $300 միլիոնով արտահայտված հեջավորման գործիք, որը նախորոշված է որպես հեջ Գ դուստր կազմակերպությունում $300 միլիոն զուտ ներդրման համար, որի ռիսկը համարվում է մայր կազմակերպության և Գ դուստր կազմակերպության միջև արտարժույթի սփոթ փոխարժեքին (EUR/USD) ենթարկվածությունը, ինչպես նաև մինչև £341 միլիոն հեջավորման գործիք, որը նախորոշված է որպես հեջ Բ դուստր կազմակերպությունում £341 միլիոն զուտ ներդրման համար, որի ռիսկը համարվում է մայր կազմակերպության և Բ դուստր կազմակերպության միջև արտարժույթի սփոթ փոխարժեքին (EUR/GBP) ենթարկվածությունը.

բ) $300 միլիոնով արտահայտված հեջավորման գործիք, որը նախորոշված է որպես հեջ Գ դուստր կազմակերպությունում $300 միլիոն զուտ ներդրման համար, որի ռիսկը համարվում է Բ և Գ դուստր կազմակերպությունների միջև արտարժույթի սփոթ փոխարժեքին (GBP/USD) ենթարկվածությունը, ինչպես նաև մինչև £500 միլիոն հեջավորման գործիք, որը նախորոշված է որպես հեջ Բ դուստր կազմակերպությունում £500 միլիոն զուտ ներդրման համար, որի ռիսկը համարվում է մայր կազմակերպության և Բ դուստր կազմակերպության միջև արտարժույթի սփոթ փոխարժեքին (EUR/GBP) ենթարկվածությունը:

ԿՈՒ11. Գ դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության զուտ ներդրման EUR/USD ռիսկը տարբեր է Բ դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության զուտ ներդրման EUR/GBP ռիսկից: Այնուամենայնիվ, ԿՈՒ10(ա) պարագրաֆում նկարագրված դեպքի պարագայում՝ նախատեսելով ԱՄՆ դոլարով արտահայտված իր կողմից պահվող հեջավորման գործիքը, մայր կազմակերպությունն արդեն ամբողջովին հեջավորում է Գ դուստր կազմակերպությունում իր զուտ ներդրման EUR/USD ռիսկը: Եթե մայր կազմակերպությունը նախատեսեր նաև GBP-ով արտահայտված՝ իր կողմից պահվող գործիքը որպես Բ դուստր կազմակերպությունում իր £500 միլիոն զուտ ներդրման հեջ, ապա այդ զուտ ներդրման £159 միլիոնը, որն իրենից ներկայացնում է Գ դուստր կազմակերպությունում ԱՄՆ դոլարով կատարված իր զուտ ներդրման GBP-ով արտահայտված համարժեքը, մայր

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում կհեջավորվեր կրկնակի GBP/EUR ռիսկի գծով:

ԿՈՒ12. ԿՈՒ10(բ) պարագրաֆում նկարագրված դեպքի պարագայում, եթե մայր կազմակերպությունը հեջավորված ռիսկը նախատեսի որպես Բ և Գ դուստր կազմակերպությունների միջև արտարժույթի սփոթ փոխարժեքին (GBP/USD) ենթարկվածություն, ապա իր $300 միլիոնով արտահայտված հեջավորման գործիքի արժեքի փոփոխության միայն GBP/USD մասը կներառվի մայր կազմակերպության՝ Գ դուստր կազմակերպությանը վերաբերող արտարժույթի վերահաշվարկման պահուստում: Փոփոխության մնացած մասը (որը համարժեք է GBP/EUR փոփոխությանը £159 միլիոնի գծով) ներառված կլինի մայր կազմակերպության համախմբված շահույթի կամ վնասի մեջ, ինչպես ԿՈՒ5 պարագրաֆի դեպքում: Քանի որ Բ և Գ դուստր կազմակերպությունների միջև USD/GBP ռիսկի նախատեսումը չի ներառում GBP/EUR ռիսկը, մայր կազմակերպությունը կարող է նախատեսել մինչև £500 միլիոն Բ դուստր կազմակերպությունում իր զուտ ներդրումից՝ մայր կազմակերպության և Բ դուստր կազմակերպության միջև արտարժույթի սփոթ փոխարժեքի (GBP/EUR) ռիսկի ենթարկվածությունը հեջավորելու համար:

Բ դուստր կազմակերպությունը պահում է USD-ով արտահայտված հեջավորման գործիք

ԿՈՒ13. Ենթադրենք, որ Բ դուստր կազմակերպությունը պահում է $300 միլիոն արտաքին պարտք, որի մուտքերը փոխանցվել են մայր կազմակերպություն ֆունտ ստեռլինգով արտահայտված ներխմբային փոխառության միջոցով: Քանի որ և՛ ակտիվները, և՛ պարտավորություններն աճել են £159 միլիոնով, Բ դուստր կազմակերպության զուտ ակտիվները մնում են անփոփոխ: Իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում Բ դուստր կազմակերպությունը կարող էր արտաքին պարտքը նախատեսել որպես Գ դուստր կազմակերպությունում իր զուտ ներդրման GBP/USD ռիսկի հեջ: Մայր կազմակերպությունը կարող է պահպանել Բ դուստր կազմակերպության կողմից այդ հեջավորման գործիքի նախատեսումը Գ դուստր կազմակերպությունում իր $300 միլիոն զուտ ներդրման GBP/USD ռիսկի հեջի համար (տե՛ս պարագրաֆ 13), և մայր կազմակերպությունը կարող է նախատեսել իր տիրապետած GBP-ով արտահայտված հեջավորման գործիքը որպես Բ դուստր կազմակերպությունում իր ողջ £500 միլիոն զուտ ներդրման հեջ: Բ դուստր կազմակերպության նախատեսած առաջին հեջը կգնահատվի Բ դուստր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի (ֆունտ ստեռլինգ) հիման վրա, իսկ մայր կազմակերպության նախատեսած երկրորդ հեջը կգնահատվի մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի (եվրո) հիման վրա: Այս դեպքում մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ԱՄՆ դոլարով արտահայտված հեջավորման գործիքով հեջավորվել է միայն Գ դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության զուտ ներդրման GBP/USD ռիսկը, այլ ոչ թե ամբողջ EUR/USD ռիսկը: Հետևաբար, Բ դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության £500 միլիոն զուտ ներդրման ողջ EUR/GBP ռիսկը կարող է հեջավորվել մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

ԿՈՒ14. Այնուամենայնիվ, Բ դուստր կազմակերպությանը վճարվելիք մայր կազմակերպության £159 միլիոն պարտքի հաշվառումը նույնպես պետք է հաշվի առնել: Եթե մայր կազմակերպության վճարման ենթակա պարտքը չհամարվի Բ դուստր կազմակերպությունում իր զուտ ներդրման մաս՝ ՀՀՄՍ 21-ի 15-րդ պարագրաֆի պայմանները չբավարարելու պատճառով, ապա դրա վերահաշվարկից առաջացած GBP/EUR արտարժույթի փոխարժեքային տարբերությունը պետք է ներառվի մայր կազմակերպության համախմբված շահույթում կամ վնասում: Եթե Բ դուստր կազմակերպությանը վճարվելիք £159 միլիոն պարտքը համարվի մայր կազմակերպության զուտ ներդրման մաս, ապա այդ զուտ ներդրումը կլիներ միայն £341 միլիոն, և այն գումարը, որը մայր կազմակերպությունը կկարողանա նախատեսել որպես հեջավորված հոդված GBP/EUR ռիսկի համար, կնվազի £500 միլիոնից £341 միլիոն համապատասխանաբար:

ԿՈՒ15. Եթե մայր կազմակերպությունը հակադարձի Բ դուստր կազմակերպության նախատեսած հեջավորող փոխհարաբերությունը, ապա մայր կազմակերպությունը կկարողանա Բ դուստր կազմակերպության տիրապետած $300 միլիոն արտաքին փոխառությունը նախատեսել որպես Գ դուստր կազմակերպությունում իր $300 միլիոն զուտ ներդրման հեջ EUR/USD ռիսկի համար, և GBP-ով արտահայտված՝ իր կողմից պահվող հեջավորման գործիքը կնախատեսի որպես Բ դուստր կազմակերպությունում միայն մինչև £341 միլիոն զուտ ներդրման հեջ: Այս դեպքում երկու հեջերի արդյունավետությունը կհաշվարկվի մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի (եվրո) հիման վրա: Հետևաբար, և՛ Բ դուստր կազմակերպության կողմից պահվող արտաքին փոխառության արժեքի USD/GBP փոփոխությունը, և՛ Բ դուստր կազմակերպությանը մայր կազմակերպության կողմից վճարվելիք պարտքի արժեքի GBP/EUR փոփոխությունը (ընդհանուր համարժեք են USD/EUR-ին) կներառվի մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունների արտարժույթի վերահաշվարկման պահուստում: Քանի որ մայր կազմակերպությունն արդեն ամբողջովին հեջավորել է Գ դուստր կազմակերպությունում իր զուտ ներդրման

EUR/USD ռիսկը, EUR/GBP ռիսկի համար այն կարող է հեջավորել Բ դուստր կազմակերպությունում իր զուտ ներդրման միայն մինչև £341 միլիոնը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ